

Կ-737-16.09.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Կանոնադրությամբ, կանոնադրության փոփոխությամբ կամ լրացմանը (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությամբ), կուսակցության ծրագրին, փոխանցման ակտին ու բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին կից ստեղծվում է պետական ռեգիստրի՝ էլեկտրոնային կնիքով հավաստված նշաթերթ, որում կատարվում է տվյալ պետական գրանցման մասին տեղեկությունների գրառում: Գրառման բովանդակությունը և այն կատարելու կարգը սահմանում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը:»,

2) 4-րդ մասից հանել «,իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում առանց վճարման» բառերը,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 մաս.

«4.1. Գրանցամատյանից քաղվածքների, գրանցամատյանում առկա տեղեկությունների հիման վրա տրվող տեղեկանքների, ինչպես նաեւ կանոնադրությունների պատճենների վրա գործակալության աշխատակցի ստորագրությունը եւ դրոշմակնիքը կարող է փոխարինվել համակարգի միջոցով գեներացվող համարանիշով եւ (կամ) արագ արձագանքման ծածկագրով:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.2 մաս.

«4.2. Սույն հոդվածի 4.1 մասով նախատեսված փաստաթղթերի իսկության ստուգումը կատարվում է սույն հոդվածի 4.1 մասով ամրագրված համարանիշը մուտքագրելով արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և

իրականացնող նախարարությունում գործող պաշտոնական փաստաթղթերի իսկության ստուգման պաշտոնական կայքում կամ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները՝ արագ արձագանքման ծածկագրի միջոցով:»,

5) 5-րդ մասից հանել «ինչպես նաեւ տարեկան մեկ անգամ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են պետական գրանցման կամ պետական հաշվառման գործընթացն օրենքով սահմանված ժամկետներից արագ իրականացնելու համար, ինչպես նաեւ անձանց իրավունքների իրականացման համար ոչ պարտադիր գործառույթների՝ որպես լրացուցիչ ծառայությունների տեսակների ամբողջական ցանկը, այդ ծառայությունների իրականացման կարգը եւ վճարի չափը: Պետական գրանցման կամ պետական հաշվառման գործընթացն օրենքով սահմանված ժամկետներից արագ իրականացնելու, ինչպես նաեւ այլ լրացուցիչ ծառայությունների դիմաց գանձվող վճարներն ուղղվում են պետական բյուջե:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գործակալության սպասարկման գրասենյակի գործառույթները կարող են իրականացվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային ծառայությունների միասնական գրասենյակների, նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների, ինչպես նաև քաղաքացիների սպասարկման ոլորտում գործառույթներ իրականացնող այլ սուբյեկտների կողմից, որոնց ցանկը, իրականացվող գործառույթների ցանկը, դրանց իրականացման կարգը և նստավայրերը, իսկ նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և քաղաքացիների սպասարկման ոլորտում գործառույթներ իրականացնող այլ սուբյեկտների կողմից իրականացնելու դեպքում՝ նաև Գործակալության հետ կնքվող պայմանագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դիվանագիտական ծառայության մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում և ընթացք են տալիս օտարերկրյա պետություններում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործառույթներին առնչվող դիմումները:»:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «փաստաթղթի ձեւով» բառերը փոխարինել «եղանակով» բառով:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել «ներկայացված օրինակների քանակի և օրինակի հերթական համարի» բառերը:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «Էլեկտրոնային» բառից հետո լրացնել «եղանակով» բառը, իսկ «հաշվի առնելով էլեկտրոնային» բառերից հետո լրացնել եղանակով կազմվող» բառերով:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էլեկտրոնային եղանակով տեղեկատվական համակարգի միջոցով դիմողին նույնականացնելու, ինչպես նաև պետական գրանցման կամ պետական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը սահմանում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվական համակարգի միջոցով պետական գրանցման կամ պետական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում դիմում ներկայացնելու պահանջը համարվում է կատարված, եթե անձը տեղեկատվական համակարգում նույնականացվելուց հետո լրացնում է պետական գրանցման կամ հաշվառման համար անհրաժեշտ տեղեկատվությունը եւ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը:»,

2) 7-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Արձանագրությունից քաղվածքի համապատասխանությունը բնօրինակին հավաստվում է գործադիր մարմնի ղեկավարի կողմից, եթե օրենքով վավերացման այլ կարգ նախատեսված չէ:»,

3) 9-րդ մասում հանել երկրորդ նախադասությունը,

4) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի կողմից սահմանված կարգով համացանցում գործակալության պաշտոնական կայքի միջոցով փաստաթղթերն անմիջապես տեղեկատվական համակարգ ներմուծելիս սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված փաստաթղթերի նմուշային ձեւերից օգտվելու դեպքում փաստաթղթեր ներկայացնելու պահանջը համարվում է պատշաճ կերպով կատարված՝ սահմանված կարգով նույնականացվելու եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:»,

5) 11-րդ մասից հանել «էլեկտրոնային» բառը:

Հոդված 8. Օրենքի 26-րդ հոդվածում`

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-րդ կետ.

«21.1) տեղեկություններ ռեդոմիցիլացման ընթացքում գտնվելու վերաբերյալ (ռեդոմիցիլացման երկիրը, տեղեկությունների գրառման օրը, ամիսը, տարին):»:

2. 1-ին մասի 22-րդ կետը «մասին» բառից հետո լրացնել «(Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման դեպքում` օտարերկրյա պետությունում անվանումը, գրանցման համարը, գրանցման ամսաթիվը, պետությունը, որի իրավագործության ներքո իրավաբանական անձը գրանցված է եղել, օտարերկրյա պետությունում գրանցումը դադարեցնելու ամսաթիվը, ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի նախնական գրանցման օրը, ամիսը, տարին, ռեդոմիցիլացման գրանցման օրը, ամիսը, տարին, իսկ օտարերկրյա պետությունում ռեդոմիցիլացման դեպքում` օտարերկրյա պետությունում անվանումը, գրանցման համարը, գրանցման ամսաթիվը, պետությունը, Հայաստանի Հանրապետությունում գրանցումը դադարեցնելու ամսաթիվը, ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի նախնական գրանցման օրը, ամիսը, տարին, ռեդոմիցիլացման գրանցման օրը, ամիսը, տարին)» բառերով,

2) 25-րդ մասից հանել «այդ դեպքում պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված` գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 28-րդ մաս.

«28. Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վերաբերյալ գրանցամատյանում ենթակա են գրառման սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկությունները, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ եւ 22-րդ կետերով սահմանված տեղեկությունների, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված տվյալներից` միայն գործադիր մարմնի ղեկավարի անունը եւ ազգանունը, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարից հրաժարվելու մասին տեղեկանքի համարը: Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների վերաբերյալ գրանցամատյանում ենթակա են գրառման սույն հոդվածի 7-րդ մասում նախատեսված տեղեկությունները, բացառությամբ 7-րդ մասի 5-րդ կետի: Սույն մասով նախատեսված տեղեկությունները գրանցամատյանում գրառվում են` հաշվի առնելով սույն մասով նախատեսված իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող առանձին օրենքներով նախատեսված առանձնահատկությունները: Սույն մասով նախատեսված տեղեկությունները գործակալությանը տրամադրվում են ինքնաշխատ եղանակով: Սույն

մասով նախատեսված իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարի վերաբերյալ գրանցամատյանում գրառված տեղեկությունները, բացառությամբ գործադիր մարմնի ղեկավարի անունից ու ազգանունից, կարող են տրամադրվել միայն պետական մարմիններին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով տեղեկատվություն ստանալու իրավասություն ունեցող մասնավոր անձանց՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության հետ կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան:»:

Հոդված 9. Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվող անձը կամ նրա կողմից լիազորված անձը պետական հաշվառման համար Գործակալություն է ներկայացնում՝

1) դիմում.

2) անձնագիրը (անձնագիրը անձը նույնականացնելուց հետո վերադարձվում է).

3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ, եթե դիմումը ներկայացվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով.

4) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով լիազորված անձի կողմից դիմում ներկայացնելու դեպքում՝ նաեւ լիազորագիրը, ինչպես նաեւ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվող անձի անձնագրի պատճենը:»,

2) 2-րդ մասից հանել «թղթային կրիչի վրա կամ էլեկտրոնային ստորագրության միջոցով» բառերը,

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Էլեկտրոնային եղանակով տեղեկատվական համակարգի միջոցով պետական հաշվառման համար դիմումը համարվում է պատշաճ ներկայացված, եթե որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվող անձը տեղեկատվական համակարգում նույնականացվելուց հետո լրացնում է հաշվառման համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Սույն մասով սահմանված կարգով հաշվառման համար պետական տուրք չի գանձվում:»,

4) 6-րդ մասի «պահին» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդված 6.1 մասով նախատեսված դեպքերի:» բառերը,

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1 մաս.

«6.1 Դիմողն իրավասու է մատնանշելու անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման ավելի երկար ժամկետ, որը չի կարող գերազանցել 30 օրացույցային օրը:»,

6) 9-րդ մասից հանել երկրորդ նախադասությունը:

Հոդված 10. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում «անձի» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրն անվավեր ճանաչվելու հետևանքով» բառերով:

Հոդված 11. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մահացած անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելն իրականացվում է ինքնաշխատ կերպով՝ նոր տեղեկությունները փոխօգնության կարգով ստանալով համապատասխան տեղեկատվական բազան վարող պետական կառավարման մարմնից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «հաստատված հիմնադրի (հիմնադիրների) կամ հիմնադիր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից» բառերը:

Հոդված 13. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «էլեկտրոնային» բառը,

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Գործակալությունը համապատասխան պետական գրանցումը պետք է կատարի անհրաժեշտ փաստաթղթերը գործակալություն ներկայացնելուց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 մաս.

«2.1. Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գործակալություն ներկայացնելուց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում գործակալությունը պետք է կատարի համապատասխան պետական գրանցումը, եթե իրավաբանական անձի հիմնադիրների կազմվում առկա է իրավաբանական անձ:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2 մաս.

«2.2. Դիմողն իրավասու է մատնանշելու առեւտրային կազմակերպության գրանցման ավելի երկար ժամկետ, որը չի կարող գերազանցել 30 օրացույցային օրը:»,

5) 9-րդ մասից հանել «,այդ դեպքում պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ» բառերը,

6) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10.Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի գրանցման համարը, գրանցման տարին, ամիսը, օրը և հարկ վճարողի հաշվառման համարը:»,

7) 11-րդ մասում «եռօրյա, իսկ ոչ առեւտրային կազմակերպությունների դեպքում՝ տասնհինգօրյա ժամկետում» բառերը փոխարինել «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «եռօրյա ժամկետում» բառերը՝ «3 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 14. Օրենքի 36.4-րդ հոդվածի 1-ին մասում «մարմինն» բառը փոխարինել «մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «եռօրյա (իսկ ոչ առեւտրային կազմակերպությունների դեպքում՝ տասնհինգօրյա) ժամկետում» բառերը՝ «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 15. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրավաբանական անձի մասնակից կամ գործադիր մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի ֆիզիկական անձի անձնագիրն անվավեր ճանաչվելու դեպքում անձնագրային տվյալների կամ իրավաբանական անձ լինելու դեպքում գրանցման տվյալների փոփոխության դեպքում պետական միասնական գրանցամատյանում գրառված համապատասխան տեղեկությունները փոփոխվում են ինքնաշխատ կերպով՝ նոր տեղեկությունները փոխօգնության կարգով ստանալով համապատասխան տեղեկատվական բազան վարող պետական կառավարման մարմնից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Այդ մասին իրավաբանական անձը, իսկ իրավաբանական անձի մասնակցի դեպքում՝ նաեւ տվյալ մասնակիցը տեղեկացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, եթե նա տրամադրել է էլեկտրոնային փոստի հասցե:»:

Հոդված 16. Օրենքի 39-րդ հոդվածը

5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Իրավաբանական անձի գտնվելու վայրի փոփոխության դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը՝ իրավաբանական անձի գտնվելու վայրի նոր հասցեի գրանցման մասին: Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:»:

Լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը՝ իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի նոր հասցեի գրանցման մասին:

Պետական միասնական գրանցամատյանում իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի հասցեի մասին տեղեկությունների բացակայության դեպքում իրավաբանական անձը պարտավոր է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Գործակալություն ներկայացնել նշված տեղեկատվությունը:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:»:

Հոդված 17. Օրենքի 40-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Ընկերության օտարերկրյա քաղաքացի կամ իրավաբանական անձ հանդիսացող մասնակցի(ների) տվյալների փոփոխության համար ներկայացվում է՝

1) դիմում՝ մասնակցի կողմից, որը պետք է պարունակի մասնակցի փոփոխվող եւ նոր տվյալների մասին տեղեկություններ. Ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը եւ անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), բնակության (հաշվառման) վայրի հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, իրավաբանական անձի պետական գրանցման տվյալներ, գտնվելու վայրի հասցեն,

2) փոփոխությունը հավաստող փաստաթուղթ,

3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:»:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «էլեկտրոնային» բառը, իսկ «միջոցով» բառից հետո լրացնել «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի հրամանով սահմանված կարգով» բառերը,

2) 7-րդ մասից հանել «,իսկ պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը,

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությանը կամ նոր խմբագրությամբ կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի փոփոխությունների գրանցման տարին, ամիսը, օրը և համապատասխան փոփոխության բնույթն ու հերթական համարը:»:

Հոդված 19. Օրենքի 44-րդ հոդվածի՝

1) 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի 2-րդ կետերի գ) ենթակետերից հանել «կամ կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ թղթային կրիչի վրա» բառերը,

2) 6-րդ մասում «(փաստաթղթեր,)» բառից հետո լրացնել «բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց մասնակիցների ռեեստրը վարում է պետական ռեգիստրը,» բառերով,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Ոչ առևտրային կազմակերպությունները սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «է» ենթակետով եւ 2-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված փաստաթղթերը չեն ներկայացնում:»:

Հոդված 20. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումներ կատարելուց հետո ներկայացված փոխանցման ակտին կամ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռն կցվում է նշաթերթ, որը բովանդակում է տվյալ փաստաթղթի համաձայն կատարված պետական գրանցման տարին, ամիսը, օրը:»,

2) 8-րդ մասից հանել «,իսկ պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը:

Հոդված 21. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «իրավաբանական անձի կանոնադրության» բառերից հետո լրացնել «,ոչ առևտրային կազմակերպությունների միացման կամ միաձուլման պայմանագրերի» բառերով:

Հոդված 22. Օրենքի 47-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:»,

2) 4-րդ մասում հանել «,որի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը:

Հոդված 23. Օրենքի 48-րդ հոդվածից 5-րդ մասից հանել «, որի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ» բառերը:

Հոդված 24. Օրենքի 50-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա) 5-րդ կետում «մեկ շաբաթվա» բառերը փոխարինել «տասը աշխատանքային օրվա» բառերով,

բ) 6-րդ կետում «մեկ շաբաթվա» բառերը փոխարինել «տասը աշխատանքային օրվա» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման դեպքում պետական տուրք չի գանձվում:»:

Հոդված 25. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 26. Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասից հանել երկրորդ նախադասությունը:

Հոդված 27. Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասում «իրավաբանական անձի հիմնադիրները» բառերը փոխարինել «իրավաբանական անձի կողմ, իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը» բառերով:

Հոդված 28. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործունեություն իրականացնող եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գրանցված

իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների եւ (կամ) հիմնարկների վերաբերյալ:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարն ընդունում են սույն օրենքից բխող բոլոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

Կ-737-16.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՋՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Կանոնադրությամբ, կանոնադրության փոփոխությամբ կամ լրացմամբ (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությամբ), կուսակցության ծրագրին, փոխանցման ակտին ու բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռին կից ստեղծվում է պետական ռեգիստրի՝ էլեկտրոնային կնիքով հավաստված նշաթերթ, որում կատարվում է տվյալ պետական գրանցման մասին տեղեկությունների գրառում: Գրառման բովանդակությունը և այն կատարելու կարգը սահմանում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար:»:

2) 4-րդ մասից հանել «,իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում առանց վճարման» բառերը,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 մաս.

«4.1. Գրանցամատյանից քաղվածքների, գրանցամատյանում առկա տեղեկությունների հիման վրա տրվող տեղեկանքների, ինչպես նաեւ կանոնադրությունների պատճենների վրա գործակալության աշխատակցի ստորագրությունը եւ դրոշմակնիքը կարող է փոխարինվել համակարգի միջոցով գեներացվող համարանիշով եւ (կամ) արագ արձագանքման ծածկագրով:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.2 մաս.

«4.2. Սույն հոդվածի 4.1 մասով նախատեսված փաստաթղթերի իսկության ստուգումը կատարվում է սույն հոդվածի 4.1 մասով ամրագրված համարանիշը մուտքագրելով արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գործող պաշտոնական փաստաթղթերի իսկության ստուգման պաշտոնական կայքում կամ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները՝ արագ արձագանքման ծածկագրի միջոցով:»,

5) 5-րդ մասից հանել «,ինչպես նաեւ տարեկան մեկ անգամ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են պետական գրանցման կամ պետական հաշվառման գործընթացն օրենքով սահմանված

Ժամկետներից արագ իրականացնելու համար, ինչպես նաև անձանց իրավունքների իրականացման համար ոչ պարտադիր գործառնությունների՝ որպես լրացուցիչ ծառայությունների տեսակների ամբողջական ցանկը, այդ ծառայությունների իրականացման կարգը եւ վճարի չափը: Պետական գրանցման կամ պետական հաշվառման գործընթացն օրենքով սահմանված ժամկետներից արագ իրականացնելու, ինչպես նաև այլ լրացուցիչ ծառայությունների դիմաց գանձվող վճարներն ուղղվում են պետական բյուջե:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Գործակալության սպասարկման գրասենյակների գործառնությունները կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների կողմից: Հյուպատոսական հիմնարկի՝ որպես սպասարկման գրասենյակի գործառնությունների իրականացման կարգը եւ մատուցվող ծառայությունների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

«3. Գործակալության սպասարկման գրասենյակի գործառնությունները կարող են իրականացվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային ծառայությունների միասնական գրասենյակների, նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների, ինչպես նաև քաղաքացիների սպասարկման ոլորտում գործառնություններ իրականացնող այլ սուբյեկտների կողմից, որոնց ցանկը, իրականացվող գործառնությունների ցանկը, դրանց իրականացման կարգը և նստավայրերը, իսկ նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և քաղաքացիների սպասարկման ոլորտում գործառնություններ իրականացնող այլ սուբյեկտների կողմից իրականացնելու դեպքում՝ նաև Գործակալության հետ կնքվող պայմանագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դիվանագիտական ծառայության մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում և ընթացք են տալիս օտարերկրյա պետություններում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության գործառնությունն առնչվող դիմումները:»:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «փաստաթղթի ձեւով» բառերը փոխարինել «եղանակով» բառով:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել «, ներկայացված օրինակների քանակի և օրինակի հերթական համարի» բառերը:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «Էլեկտրոնային» բառից հետո լրացնել «եղանակով» բառը, իսկ «հաշվի առնելով էլեկտրոնային» բառերից հետո լրացնել եղանակով կազմվող» բառերով:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էլեկտրոնային եղանակով տեղեկատվական համակարգի միջոցով դիմողին նույնականացնելու, ինչպես նաև պետական գրանցման կամ պետական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը սահմանում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և

հրականացնող նախարարը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվական համակարգի միջոցով պետական գրանցման կամ պետական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում դիմում ներկայացնելու պահանջը համարվում է կատարված, եթե անձը տեղեկատվական համակարգում նույնականացվելուց հետո լրացնում է պետական գրանցման կամ հաշվառման համար անհրաժեշտ տեղեկատվությունը եւ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը:»,

2) 7-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Արձանագրությունից քաղվածքի համապատասխանությունը բնօրինակին հավաստվում է գործադիր մարմնի ղեկավարի կողմից, եթե օրենքով վավերացման այլ կարգ նախատեսված չէ:»,

3) 9-րդ մասում հանել երկրորդ նախադասությունը,

4) 10-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և հրականացնող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից սահմանված կարգով համացանցում գործակալության պաշտոնական կայքի միջոցով փաստաթղթերն անմիջապես տեղեկատվական համակարգ ներմուծելիս սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված փաստաթղթերի նմուշային ձեւերից օգտվելու դեպքում փաստաթղթեր ներկայացնելու պահանջը համարվում է պատշաճ կերպով կատարված՝ սահմանված կարգով նույնականացվելու եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:»,

5) 11-րդ մասից հանել «Էլեկտրոնային» բառը:

Հոդված 8. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 21.1-րդ կետ.

«21.1) տեղեկություններ ռեգոմիցիլացման ընթացքում գտնվելու վերաբերյալ (ռեգոմիցիլացման երկիրը, տեղեկությունների գրառման օրը, ամիսը, տարին):»:

2. 1-ին մասի 22-րդ կետը «մասին» բառից հետո լրացնել «(Հայաստանի Հանրապետությունում ռեգոմիցիլացման դեպքում՝ օտարերկրյա պետությունում անվանումը, գրանցման համարը, գրանցման ամսաթիվը, պետությունը, որի իրավագործության ներքո իրավաբանական անձը գրանցված է եղել, օտարերկրյա պետությունում գրանցումը դադարեցնելու ամսաթիվը, ռեգոմիցիլացվող իրավաբանական անձի նախնական գրանցման օրը, ամիսը, տարին, ռեգոմիցիլացման գրանցման օրը, ամիսը, տարին, իսկ օտարերկրյա պետությունում ռեգոմիցիլացման դեպքում՝ օտարերկրյա պետությունում անվանումը, գրանցման համարը, գրանցման ամսաթիվը, պետությունը, Հայաստանի Հանրապետությունում գրանցումը դադարեցնելու ամսաթիվը, ռեգոմիցիլացվող իրավաբանական անձի նախնական գրանցման օրը, ամիսը, տարին, ռեգոմիցիլացման գրանցման օրը, ամիսը, տարին)» բառերով,

2) 25-րդ մասից հանել «.այդ դեպքում պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը,

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 28-րդ մաս.

«28. Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վերաբերյալ գրանցամատյանում ենթակա են գրառման սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված

տեղեկությունները, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ եւ 22-րդ կետերով սահմանված տեղեկությունների, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված տվյալներից՝ միայն գործադիր մարմնի ղեկավարի անունը եւ ազգանունը, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարից հրաժարվելու մասին տեղեկանքի համարը: Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների վերաբերյալ գրանցամատյանում ենթակա են գրառման սույն հոդվածի 7-րդ մասում նախատեսված տեղեկությունները, բացառությամբ 7-րդ մասի 5-րդ կետի: Սույն մասով նախատեսված տեղեկությունները գրանցամատյանում գրառվում են՝ հաշվի առնելով սույն մասով նախատեսված իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող առանձին օրենքներով նախատեսված առանձնահատկությունները: Սույն մասով նախատեսված տեղեկությունները գործակալությանը տրամադրվում են ինքնաշխատ եղանակով: Սույն մասով նախատեսված իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարի վերաբերյալ գրանցամատյանում գրառված տեղեկությունները, բացառությամբ գործադիր մարմնի ղեկավարի անունից ու ազգանունից, կարող են տրամադրվել միայն պետական մարմիններին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով տեղեկատվություն ստանալու իրավասություն ունեցող մասնավոր անձանց՝ արդարադատության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան:»:

Հոդված 9. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվող անձը կամ նրա կողմից լիազորված անձը պետական հաշվառման համար Գործակալություն է ներկայացնում՝

1) դիմում.

2) անձնագիրը (անձնագիրը անձը նույնականացնելուց հետո վերադարձվում է).

3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ, եթե դիմումը ներկայացվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով.

4) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով լիազորված անձի կողմից դիմում ներկայացնելու դեպքում՝ նաեւ լիազորագիրը, ինչպես նաեւ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվող անձի անձնագրի պատճենը:»,

2) 2-րդ մասից հանել «թղթային կրիչի վրա կամ էլեկտրոնային ստորագրության միջոցով» բառերը,

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Էլեկտրոնային եղանակով տեղեկատվական համակարգի միջոցով պետական հաշվառման համար դիմումը համարվում է պատշաճ ներկայացված, եթե որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվող անձը տեղեկատվական համակարգում նույնականացվելուց հետո լրացնում է հաշվառման համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Սույն մասով սահմանված կարգով հաշվառման համար պետական տուրք չի գանձվում:»,

4) 6-րդ մասի «պահին» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդված 6.1 մասով նախատեսված դեպքերի:» բառերը,

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1 մաս.

«6.1 Դիմողն իրավասու է մատնանշելու անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման ավելի երկար ժամկետ, որը չի կարող գերազանցել 30 օրացույցային օրը:»,

6) 9-րդ մասից հանել երկրորդ նախադասությունը:

Հոդված 10. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում «անձի» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրն անվավեր ճանաչվելու հետևանքով» բառերով:

Հոդված 11. Օրենքի 30-րդ հոդվածի

~~1-րացնել հետևյալ բովանդակությամբ 1-2 մաս.~~

~~«Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանման դիմումը ներկայացնելիս գործակալությանն է հանձնվում անհատ ձեռնարկատիրոջ կնիքը (առկայության դեպքում), որի ոչնչացման կարգը սահմանում է ՀՀ արդարադատության նախարարը:»:~~

2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մահացած անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելն իրականացվում է ինքնաշխատ կերպով՝ նոր տեղեկությունները փոխօգնության կարգով ստանալով համապատասխան տեղեկատվական բազան վարող պետական կառավարման մարմնից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «՝ հաստատված հիմնադրի (հիմնադիրների) կամ հիմնադիր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից» բառերը:

Հոդված 13. Օրենքի 35-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «էլեկտրոնային» բառը,

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Գործակալությունը համապատասխան պետական գրանցումը պետք է կատարի անհրաժեշտ փաստաթղթերը գործակալություն ներկայացնելուց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 մաս.

«2.1. Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գործակալություն ներկայացնելուց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում գործակալությունը պետք է կատարի համապատասխան պետական գրանցումը, եթե իրավաբանական անձի հիմնադիրների կազմվում առկա է իրավաբանական անձ:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2 մաս.

«2.2. Դիմողն իրավասու է մատնանշելու առետրային կազմակերպության գրանցման ավելի երկար ժամկետ, որը չի կարող գերազանցել 30 օրացույցային օրը:»,

5) 9-րդ մասից հանել «,այդ դեպքում պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ» բառերը,

6) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի գրանցման համարը, գրանցման տարին, ամիսը, օրը և հարկ վճարողի հաշվառման համարը:».

7) 11-րդ մասում «եռօրյա, իսկ ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ տասնհինգօրյա ժամկետում» բառերը փոխարինել «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «եռօրյա ժամկետում» բառերը՝ «3 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 14. Օրենքի 36.4-րդ հոդվածի 1-ին մասում «մարմինն» բառը փոխարինել «մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «եռօրյա (իսկ ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ տասնհինգօրյա) ժամկետում» բառերը՝ «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 15. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրավաբանական անձի մասնակից կամ գործադիր մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի ֆիզիկական անձի անձնագիրն անվավեր ճանաչվելու դեպքում անձնագրային տվյալների կամ իրավաբանական անձ լինելու դեպքում գրանցման տվյալների փոփոխության դեպքում պետական միասնական գրանցամատյանում գրառված համապատասխան տեղեկությունները փոփոխվում են ինքնաշխատ կերպով՝ նոր տեղեկությունները փոխօգնության կարգով ստանալով համապատասխան տեղեկատվական բազան վարող պետական կառավարման մարմնից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Այդ մասին իրավաբանական անձը, իսկ իրավաբանական անձի մասնակցի դեպքում՝ նաեւ տվյալ մասնակիցը տեղեկացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, եթե նա տրամադրել է էլեկտրոնային փոստի հասցե:»:

Հոդված 16. Օրենքի 39-րդ հոդվածը

ի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Իրավաբանական անձի գտնվելու վայրի փոփոխության դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը՝ իրավաբանական անձի գտնվելու վայրի նոր հասցեի գրանցման մասին: Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:»:

Լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը՝ իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի նոր հասցեի գրանցման մասին:

Պետական միասնական գրանցամատյանում իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի հասցեի մասին տեղեկությունների բացակայության դեպքում իրավաբանական անձը պարտավոր է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Գործակալություն ներկայացնել նշված տեղեկատվությունը:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:»:

Հոդված 17. Օրենքի 40-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Ընկերության օտարերկրյա քաղաքացի կամ իրավաբանական անձ հանդիսացող մասնակցի(ների) տվյալների փոփոխության համար ներկայացվում է՝

1) դիմում՝ մասնակցի կողմից, որը պետք է պարունակի մասնակցի փոփոխվող եւ նոր տվյալների մասին տեղեկություններ. ֆիզիկական անձանց դեպքում անունը, ազգանունը եւ անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), բնակության (հաշվառման) վայրի հասցեն, իրավաբանական անձի դեպքում անվանումը, իրավաբանական անձի պետական գրանցման տվյալներ, գտնվելու վայրի հասցեն,

2) փոփոխությունը հավաստող փաստաթուղթ,

3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:»:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «էլեկտրոնային» բառը, իսկ «միջոցով» բառից հետո լրացնել «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով սահմանված կարգով» բառերը,

2) 7-րդ մասից հանել «,իսկ պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը,

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությանը կամ նոր խմբագրությամբ կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի փոփոխությունների գրանցման տարին, ամիսը, օրը և համապատասխան փոփոխության բնույթն ու հերթական համարը:»:

Հոդված 19. Օրենքի 44-րդ հոդվածի՝

1) 1. 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի 2-րդ կետերի գ) ենթակետից հանել «կամ կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ թղթային կրիչի վրա» բառերը:

2) 6-րդ մասում «(փաստաթղթեր,)» բառից հետո լրացնել «բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց մասնակիցների ռեեստրը վարում է պետական ռեգիստրը,» բառերով,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Ոչ առևտրային կազմակերպությունները սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «է» ենթակետով եւ 2-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված փաստաթղթերը չեն ներկայացնում:»:

Հոդված 20. Օրենքի 45-րդ հոդվածի՝

~~1) 7-րդ մասում «դեկավարը» բառը փոխարինել «աշխատակիցը» բառերով:»:~~

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումներ կատարելուց հետո ներկայացված փոխանցման ակտին կամ բաժանիչ

(առանձնացման) հաշվեկշռին կցվում է նշաթերթ, որը բովանդակում է տվյալ փաստաթղթի համաձայն կատարված պետական գրանցման տարին, ամիսը, օրը:».

2) 8-րդ մասից հանել «,իսկ պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը:

Հոդված 21. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «իրավաբանական անձի կանոնադրության» բառերից հետո լրացնել «,ոչ առելուրային կազմակերպությունների միացման կամ միաձուլման պայմանագրերի» բառերով:

Հոդված 22. Օրենքի 47-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:»,

2) 4-րդ մասում հանել «,որի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:» բառերը:

Հոդված 23. Օրենքի 48-րդ հոդվածից 5-րդ մասից հանել «, որի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ» բառերը:

Հոդված 24. Օրենքի 50-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա) 5-րդ կետում «մեկ շաբաթվա» բառերը փոխարինել «տասը աշխատանքային օրվա» բառերով,

բ) 6-րդ կետում «մեկ շաբաթվա» բառերը փոխարինել «տասը աշխատանքային օրվա» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման դեպքում պետական տուրք չի գանձվում:»:

~~2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.~~

~~«1.1 Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման դիմումը ներկայացնելիս գործակալությանն է հանձնվում իրավաբանական անձի կնիքը (առկայության դեպքում), որի ոչնչացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:»:~~

Հոդված 25. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 26. Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասից հանել երկրորդ նախադասությունը:

~~**Հոդված 27.** Օրենքի 58-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.~~

~~«2. Առանձնացված ստորաբաժանումը կամ հիմնարկը հաշվառումից հանելու դիմումը ներկայացնելիս գործակալությանն է հանձնվում առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի կնիքը (առկայության դեպքում), որի ոչնչացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը»:~~

Հոդված 28. Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասում «իրավաբանական անձի հիմնադիրները» բառերը փոխարինել «իրավաբանական անձի կողմ, իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը» բառերով:

Հոդված 29. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործունեություն իրականացնող եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գրանցված իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների եւ (կամ) հիմնարկների վերաբերյալ:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ արդարադատության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարն ~~Հայաստանի~~ ~~Հանրապետության~~ ~~արդարադատության~~ ~~նախարարն~~ ընդունում են սույն օրենքից բխող բոլոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ

ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-737-16.09.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՑԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումներին, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 10-րդ հոդվածի 1-ին մաս, 22-րդ հոդվածի 2-րդ մաս և 25-րդ հոդված:	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կնիքի անհրաժեշտությանն առնչվող դրույթների բացակայությունը, նախագծից հանել լուծարման պետական գրանցման կամ դադարման պետական հաշվառման դեպքերում կնիքը հանձնելու մասին դրույթները:	Նախագծից հանվել են 11-րդ հոդվածի 1-ին մասը, 24-րդ հոդվածի 2-րդ մասը և 27-րդ հոդվածը:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	1) 1-ին հոդվածի 1-ին մաս	Օրենքը լրացնել 9-րդ հոդվածի 2-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ՝	Նախագիծը լրացվել է 1-ին հոդվածի 1-ին մասով,	Ընդունվել է

		2)Նախագծի 5-րդ հոդված 3)Նախագծի 12-րդ հոդված 4) Նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մաս 5)Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մաս 6) Նախագծի 13-րդ հոդվածի 6-րդ մաս	«Կանոնադրությանը, կանոնադրության փոփոխությանը կամ լրացմանը (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությանը), կուսակցության ծրագրին, փոխանցման ակտին ու բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին կից ստեղծվում է պետական ռեգիստրի՝ էլեկտրոնային կնիքով հավաստված նշաթերթ, որում կատարվում է տվյալ պետական գրանցման մասին տեղեկությունների գրառում: Գրառման բովանդակությունը և այն կատարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:», Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել «,ներկայացված օրինակների քանակի և օրինակի հերթական համարի» բառերը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «`հաստատված հիմնադրի (հիմնադիրների) կամ հիմնադիր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից» բառերը Օրենքի 42-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությանը կամ նոր խմբագրությամբ կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի փոփոխությունների գրանցման տարին, ամիսը, օրը և համապատասխան փոփոխության բնույթն ու	5-րդ հոդվածով, 12-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, փոփոխվել են նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը, 13-րդ հոդվածի 6-րդ մասը և 20-րդ հոդվածի 1-ին մասը:	
--	--	--	---	--	--

		7) Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մաս	հերթական համարը:»: Օրենքի 44-րդ հոդվածի՝ 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի 2-րդ կետերի գ) ենթակետերից հանել «կամ կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ թղթային կրիչի վրա» բառերը, Օրենքի 35-րդ հոդվածի 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «10.Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի գրանցման համարը, գրանցման տարին, ամիսը, օրը և հարկ վճարողի հաշվառման համարը:», Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել է հետևյալ խմբագրությամբ. «7. Իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումներ կատարելուց հետո ներկայացված փոխանցման ակտին կամ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին կցվում է նշաթերթ, որը բովանդակում է տվյալ փաստաթղթի համաձայն կատարված պետական գրանցման տարին, ամիսը, օրը:»:		
--	--	--	---	--	--

3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Հստակեցնել Գործակալության սպասարկման գրասենյակի գործառույթները իրականացնող մարմինների և անձանց ցանկերը: Սահմանել, որ դիվանագիտական ծառայության մարմինները ընդունում են դիմումներ:	Նախագծի 3-րդ հոդվածը վերաձևակերպվել է:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ հոդված	Գործող իրավաբանական անձանց էլեկտրոնային փոստի մասին տեղեկությունների (առանց կանոնադրության փոփոխությունների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության) փոփոխության դեպքում նախատեսել գրանցման իրականացումն առանց պետական տուրքի վճարման: Միաժամանակ էլեկտրոնային փոստի մասին տեղեկությունների բացակայության դեպքում իրավաբանական անձանց համար սահմանել ժամկետ, որի ընթացքում իրավաբանական անձինք պարտավոր են ներկայացնել նշված տեղեկատվությունը:	Ընդունվել է: Նախագծի 16-րդ հոդվածը լրացվել է 2-րդ մասով:	Ընդունվել է
5.	«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	Նախագիծ	Նախագծում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն» և «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար» բառերը փոխարինել համապատասխանաբար «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն» և «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարար» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին, 3-րդ, 7- րդ, 8-րդ 18-րդ և 28-րդ հոդվածներում կատարվել են առաջարկված փոփոխությունները:	Ընդունվել է

6.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	Տարընթերցումներից նպատակով «պետական ռեգիստրում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման համար» տողը «պետական» բառից առաջ լրացնել «դիմումի համաձայն» բառերով, իսկ «գրանցման» բառից հետո լրացնել «(գրանցումների)» բառով:	Կատարվել է առաջարկված փոփոխությունը:	Ընդունվել է
7.	«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Արթուր Դավթյան	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	ՍՊ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման համար պետական տուրքի դրույքաչափը 30-ապատիկից նվազեցնել 20- ապատիկի:	Ընդունվել է: Կատարվել է առաջարկված փոփոխությունը:	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագիծը հանել օրենքների փաթեթից:	Նախագիծը հանվել է օրենքների փաթեթից:	Ընդունվել է

9.	ՀՀ կառավարություն	«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)	Օրենքի 1-ին հոդվածի «ա» մասում ներկայացուցչությունների բառը փոխարինել «ծառայության մարմինների» բառերով: Առաջարկվող փոփոխության արդյունքում կատացվի, որ «հյուպատոսական հիմնարկ», հետևաբար նաև «հյուպատոսական հիմնարկի ղեկավար» հասկացությունների տակ կմտնեն համապատասխանաբար «Դիվանագիտական ծառայություն մասին» օրենքով սահմանված դիվանագիտական ծառայության մարմինները, այն է՝ Նախարարությունը, ՀՀ դեսպանությունները և հյուպատոսական հիմնարկները, ինչպես նաև դրանց ղեկավարները և առանձին պաշտոնատար անձինք, որոնք կատարում են հյուպատոսի պարտականություններ: Արդյունքում սույն նախագծով առաջարկվող 22.1 հոդվածի լրացումը վերաբերելի կլինի նաև ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչությանը, որպես Դատվածության մասին տեղեկանք տրամադրող մարմին:	Կատարվել է առաջարկված բոլոր փոփոխությունները և լրացումները:	Ընդունվել է
		Նախագծի 5-րդ հոդված	Օրենքի 42-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել: Քանի որ 40-րդ հոդվածի 1-ին մասում հստակ նշվում է, որ գրանցումը կատարվում է «համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության»: Կարծում ենք այս ձևակերպումը բավարար է՝ հաշվի առնելով, որ ՔԿԱԳ գրանցումների կարգը արտաքին գործերի և արդարադատության նախարարների համատեղ հրահանգով չի կարգավորվում, ինչպես նշված է 42-րդ հոդվածում:		Ընդունվել է
		Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Օրենքը լրացնել 22.1-ին և 22.2-րդ հոդվածներով՝ տեղեկանքների տրամադրման վերաբերյալ:		Ընդունվել է

		Նախագծի 4-րդ հոդված	Օրենքի 2-րդ բաժնի 11-րդ գլխի վերնագիրը վերախմբագրել:		Ընդունվել է
		Նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 42.1-ին կետը լրամշակել:		Ընդունվել է
10.	«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	Նախագիծ	Նախագծում կիրառվող նախարարությունների անվանումները փոխարինել «Կառավարության արտաքին գործերի/արդարադատության ոլորտը մշակող և իրականացնող նախարարություն» բառերով՝ նույնական մոտեցում ցուցաբերելով նաև համապատասխան նախարարներին վերաբերող լիազորությունները կարգավորող դրույթներում:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ և 6-րդ հոդվածներում կատարվել են առաջարկված փոփոխությունները:	Ընդունվել է